ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Էփրիքոթ Կապիտալ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) Ընկերության 2024 թվականի գործունեության և տարեկան ֆինանսական հաշվետվությունների վերստուգման նպատակով արտաքին անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության համար հայտարարում է բաց մրցույթ (այսուհետ՝ Մրցույթ)՝ համաձայն Ընկերության բաժնետերերի արտահերթ ժողովի կողմից 2022 թվականի հոկտեմբերի 14-ին հաստատված «Արտաքին աուդիտ իրականացնող անձի ընտրության» ընթացակարգի պահանջների:

Աուդիտի աշխատանքները պետք է ընդգրկեն՝

- 2024 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտը և աուդիտորական եզրակացության ներկայացումը:
- 2024 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտի արդյունքում կազմված «Նամակ ղեկավարությանը» փաստաթղթի ներկայացումը:

Աուդիտը պետք է իրականացվի միջազգային հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան:

Մրցույթին կարող են մասնակցել այն աուդիտորական կազմակերպությունները, որոնց մոտ բացակայում են «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված արգելքները, և որոնք միաժամանակ բավարարում են հետևյալ չափանիշներին՝

1) Ընկերության աուդիտն իրականացնող աուդիտորական կազմակերպությունը պետք է լինի «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված մասնագիտացված կառույցի անդամ,
2) Աուդիտորական կազմակերպությունը պետք է ունենա ֆինանսական կազմակերպությունների աուդիտի իրականացման առնվազն 5 (հինգ) տարվա աուդիտի իրականացման փորձ: Ընդ որում, այս չափանիշը չի տարածվում ըստ միջազգային խմբի տարեկան համախառն հասույթի մակարդակի առաջին 10 աուդիտորական ցանցերի լիիրավ անդամ հանդիսացող աուդիտորական կազմակերպությունների վրա:
3) Աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտորը պետք է լինի Մասնագիտացված կառույցի անդամ, ունենա ներդրումային ընկերության աուդիտորի առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ և առնվազն 5 ներդրումային ընկերության աուդիտի իրականացման փորձ, ինչպես նաև՝ Մասնագիտացված կառույցի կողմից տրված

աուդիտորի որակավորում և միջազգային հաշվապահական կամ աուդիտորական որակավորման վկայական (օրինակ՝ Էյ-Սի-Սի-Էյ, Սի-Այ-Էս-Էյ),

4) Աուդիտորական խմբում ներգրավված աշխատակիցների առնվազն կեսը պետք է լինեն Մասնագիտացված կառույցի անդամ, ունենան աուդիտորական կազմակերպությունում առնվազն 3 (երեք) տարվա աշխատանքային փորձ, ինչպես նաև՝ Մասնագիտացված կառույցի կողմից տրված աուդիտորի որակավորում կամ միջազգային հաշվապահական կամ աուդիտորական որակավորում (օրինակ՝ Էյ-Սի-Սի-Էյ, Սի-Այ-Էս-Էյ),

Աուդիտորական կազմակերպությունների կողմից ներկայացվող առաջարկները պետք է ստորագրված լինեն լիազոր անձի կողմից և առնվազն պետք է ներառեն՝

1) Աուդիտորական կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը և կապի միջոցները,
2) Աուդիտի աշխատանքներին մասնակցող՝ միջազգային հաշվապահական և (կամ) աուդիտորական որակավորում ունեցող աշխատակիցների (այդ թվում՝ աուդիտորական խմբի ղեկավարի) անունները, նրանց աշխատանքային փորձը, քանակը,
3) Աուդիտորական կազմակերպության և աուդիտին մասնակցող աշխատակիցների՝ մրցույթի պայմաններին համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի պատճենները,
4) Աուդիտի իրականացման ընդհանուր գինը (ներառյալ բոլոր տեսակի հարկերն ու ծախսերը),
5) Աուդիտի իրականացման ընդհանուր գնի վճարման եղանակն ու պայմանները,
6) Աուդիտի իրականացման և աուդիտորական եզրակացության ներկայացման ժամկետները,
7) Գրություն այն մասին, որ աուդիտորական կազմակերպությունը չի առարկում, որպեսզի իր և Ընկերության միջև կնքվող պայմանագրում դրույթ լինի այն մասին, որ աուդիտորական կազմակերպությունը համաձայն է ՀՀ կենտրոնական բանկի հրավերով մասնակցել Ընկերության, աուդիտորական կազմակերպության և Կենտրոնական բանկի միջև արտաքին աուդիտի արդյունքների քննարկման համար կազմակերպվող եռակողմ հանդիպմանը,
8) Պարտավորագիր այն մասին, որ Ընկերության կողմից ընտրվելու դեպքում աուդիտորական կազմակերպությունը պարտավոր է Ընկերության հետ կնքել աուդիտի իրականացման պայմանագիրը առաջարկում նշվախ գնով և պայմաններով:
9) Հավաստում առ այն, որ աուդիտորական կազմակերպությունը և աուդիտին մասնակցող աշխատակիցները բավարարում են սույն հայտարարության մեջ նշված մրցույթի մասնակիցներին ներկայացվող չափանիշներին և մրցույթի պայմաններին:
10) Մրցույթի մասնակցի հայեցողությամբ լրացուցիչ այլ տեղեկություններ:

Առաջարկները կարող են ներկայացվել մինչև **<u>2024 թվականի սեպտեմբերի 6-ը ներառյալ:</u>** Առաջարկները կարող են ներկայացվել թղթային տարբերակով՝ Ընկերության՝ ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 10, 110 տարածք հասցեում գտնվող գրասենյակ ներկայացնելով/ուղարկելով, կամ էլեկտրոնային եղանակով՝ ուղարկելով Ընկերության info@apricotcapital.am էլեկտրոնային փոստին:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից հաղթող ճանաչված անձ հաստատված աուդիտորական կազմակերպության հետ համապատասխան պայմանագիրը կկնքվի ոչ ուշ քան մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը: